

ԹՈՒՂԹԲ Ի ԴԻՒԱՆԷ: ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՐԱՆԻՆ ՍՍՈՅ.

Հանդէս Արեւելից (Revue de l'Orient) անունով ամսագրոյն Մարտի տետրակին սկիզբը մեր պատուական բարեկամ Պարոն Լանկուա հնագէտը հաշուած մը հրատարակեց Սոյ Կաթողիկոսարանին մէջ գտնուած՝ մանաւանդ թէ կաթողիկոսարանին կիսաւեր ձեղունամէջին մէկ անկիւնը նետուած ու կէս փտտած քանի մը գրուածքներուն վրայ : Այն գրուածքները ոչ երեւելի հնութիւն մը ունին եւ ոչ գիտնալու արժանի տեղեկութիւններ կուտան օտարաց՝ ազգային պատմութեան վրայ, ինչպէս ինքն ալ կըսէ : Թղթերուն մէջ ամենէն հիններն ալ այս դարուս գրուածքներ են . օրինակի համար, առաջինը Պուքրէշի Գրիգոր Անուշեան անունով մեկուն նամակն է՝ աշխարհիկ ռճով, յորում Սոյ արքեպիսկոպոսաց մեկէն կըխնդրէ որ տապանագիր մը շինէ իր որդւոյն գերեզմանին համար, 1816ին գրուած : Քանի մը կոնդակներ կան այլ եւ այլ նուիրակներու տրուած. եփրեմ կաթողիկոսին օրերը ձեռնադրուած քանանայից ցուցակը. Միքայէլ կաթողիկոսին օրերը գրուած քանի մը նամակներ, եւ ուրիշ աննշան յիշատակարաններ, մեծ մասը ռամկօրէն, ռմանք ալ հայ գրով տաճկերէն :

Այս գրուածոց մէջ ամենէն նշանաւորն է Միքայէլ կաթողիկոսին մէկ գիրը առ Լուի-Ֆիլիպի Գաղղիոյ քաղաւորը գրուած Տարսոնէն՝ հոռի ամսոյ 27ին ՌԿԹ թուին (1841) : Նամակին ռճէն այնպէս կերենայ թէ բնագիրն ալ գաղղիարէն եղած է, եւ միայն իմաստները հայկական ձեւա-

ցրենլու աշխատուած. իսկ նիւթն է քաղաւորին համար բարեմաղթութիւններ, Տարսոնի Գաղղիացոց հիւպատոսին գովեստներ, կաթողիկոսին եգիպտացոց արշաւանքին պատճառաւ՝ Սոյ արքունի Տարսոն քաղուած ատենը՝ նոյն հիւպատոսէն գտած պաշտպանութեանը համար շնորհակալութիւններ :

Վերջապէս մեզի ալ կերենայ թէ այն գրուածքները ոչ երբ Սոյ կաթողիկոսարանին բուն դիւանը պէտք է համարիլ, հապա այն դիւանէն դուրս ձգուած խեղերանք ու աւելորդ թղթի կտորանք. վասն զի բնական ալ չերեւար որ կաթողիկոսարանին երեւելի ու հարկաւոր նամակները որ եւ իցէ մարդու առջեւ դրուին, եւ կամ իբրեւ անպէտ բաներ օտարազգի ճանապարհորդաց քննութեանը տակ ձգուին :

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՄՈՒՈՐԱԿԻՆ ԳԻՒՏԸ.

Պ. Լըվեռիէ աստեղարաշխարհագրի Գիտութեանց ձեմարանին ծանոյց թէ Մարտի 31ին Պարոն Կօլտշմիք ուսումնասէր պատկերահանը նոր փոքրիկ մօլորակ մը գտեր է, որով մինչեւ հիմա տեսնուած մօլորակներուն թիւը քառասուն հատ կըլլայ : Նոր գտնուածը իններորդ կարգի աստեղաց մեծութիւնն ունի, եւ Պ. Կօլտշմիքին տեսածներուն մէջ երրորդն է :

Propriétaire-gérant : A. LACHAT.

Ի ՓԱՐԻԶ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ՎԱՆՏԷՐԻ :

PARIS. — IMPRIMERIE WALDER, RUE DONAPARTE, 44.